<<Ֆարմ կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ Դիտորդ խորհուրդ

01.06.2026թ.

Հիմք ընդունելով ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի համատեքստում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված Կորպորատիվ կառավարման առաջընթացի մատրիցան, **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա»** ՈՒՎԿ ԱԿ Դիտորդ Խորհուրդը՝

- խորությամբ ուսումնասիրել է Մատրիցայում արտացոլված կորպորատիվ կառավարման փուլերի հիմնական բնութագրիչները,
- կորպորատիվ կառավարման փուլերի հիմնական բնութագրիչները համեմատել է կազմակերպության կորպորատիվ կառավարման պրակտիկայի հետ և
- հանգել եզրակացության, որ կազմակերպությունն առավելապես գտնվում է Կորպորատիվ կառավարման առաջընթացի երկրորդ փուլում:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ Դիտորդ Խորհուրդն օբյեկտիվորեն գտնում է, որ 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունը մասամբ է համապատասխանել ՀՀ Կորպորատիվ կառավարման սկզբունքներին, և կազմակերպության համար առավել բնութագրական փուլը երկրորդն է:

Սույնով կազմակերպությունը հանձնառություն է ստանձնել մշակել և հրապարակել Կորպորատիվ կառավարման առաջընթացի մատրիցայի երկրորդ փուլի համար բնութագրական կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը՝ առաջնորդվելով «Հետևի՛ր կամ բացատրի՛ր» մոտեցմամբ:

<<Ֆարմ կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ
Դիտորդ խորհրդի նախագահ՝ **Ս. Հայրապետյան**